

**1.4. Աշխատանքի շուկայի ցուցանիշներ**

**1.4.1. Զբաղվածություն**

Տնտեսապես ակտիվ բնակչության կազմը

Տարիներ	Տնտեսապես ակտիվ բնակչություն, մարդ	այդ թվում		Գործազրկության մակարդակ, %
		զբաղվածների թվաքանակը, մարդ	պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակը, մարդ	
2006	58159	54599	3560	6,1
2007	59116	56112	3004	5,1
2008	61967	58503	3464	5.6
2009	62323	58792	3531	5.7

2009թ. ԼՂՀ-ում գործազրկության մակարդակը, հաշվարկված որպես զբաղվածության ծառայություններում գրանցված գործազուրկների և տնտեսապես ակտիվ բնակչության (զբաղվածներ և գործազուրկներ) հարաբերակցություն, կազմել է 5.7 տոկոս: 2009թ. տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակը հանրապետությունում ըստ գնահատման կազմել է 62323<sup>\*</sup> մարդ:

Ըստ վիճակագրական տեղեկություններ տրամադրողներից ստացված տվյալների և գնահատման՝ հանրապետությունում 2009թ. զբաղվածների թվաքանակը կազմել է 58792 մարդ, որից 77,7 տոկոսը կամ 45652 մարդ վարձու աշխատողներ են (ներառյալ անհատ ձեռնարկատերերը), իսկ 22,3 տոկոսը կամ 13140 մարդ հանդիսանում են ինքնազբաղվածներ, մասնավորապես գյուղատնտեսությունում:

*Զբաղվածների (վարձու աշխատողների) միջին ցուցակային թվաքանակն ըստ տնտեսության ճյուղերի*

	2008թ.	2009թ.	Բացարձակ աճը (նվազումը «->» նշանով)	/մարդ/ Աճի տեմպը, տոկոսներով
<b>Ընդամենը</b>	<b>44093</b>	<b>45652</b>	<b>1559</b>	<b>103,5</b>
Արդյունաբերություն	5034	5170	136	102,7
Գյուղատնտեսություն	4014	3930	-84	97,9
Անտառտնտեսություն	199	200	1	100,5
Շինարարություն	3737	4050	313	108,4
Տրանսպորտ	798	791	-7	99,1
Կապ	1106	1231	125	111,3
Առևտուր	4626	4476	-150	96,8
Բնակվումտնտեսության և կենցաղապասարկում	1736	2121	385	122,2
Առողջապահություն	2373	2406	33	101,4
Սոցիալական ապահովություն և ապահովագրություն	165	97	-68	58,8
Ֆիզկուլտուրա և սպորտ	173	183	10	105,8
Կրթություն	8018	8297	279	103,5
Մշակույթ և արվեստ	1763	1772	9	100,5
Գիտություն և գիտական սպասարկում	113	142	29	125,7
Ֆինանսներ և վարկ	417	453	36	108,6
Կառավարում և պաշտպանություն	8602	9155	553	106,4
Հասարակական կազմակերպություններ	805	765	-40	95,0
Այլ ճյուղեր	414	413	-1	99,8

2010թ. հունվարի 1-ի դրությամբ ԼՂՀ սոցիալական ապահովության նախարարության աշխատանքի և զբաղվածության բաժնում հաշվառման են կանգնել 3751 չզբաղված քաղաքացիներ, որոնց 94.1 տոկոսը ստացել են գործազուրկի կարգավիճակ: Չզբաղված քաղաքացիների թվաքանակը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 1.7 տոկոսով:


\* Տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակն իրենից ներկայացնում է զբաղված և պաշտոնապես գրանցված գործազուրկ բնակչության թվաքանակների հանրագումար: Զբաղված բնակչության թվաքանակի հաշվառումը կատարվել է վիճակագրական տեղեկություններ տրամադրողներից ամսական պարբերականությամբ ստացվող պետական վիճակագրական հաշվետվությունների տվյալների, ինքնազբաղվածների (ներառյալ գյուղական տնտեսություններում զբաղվածները՝ հաշվի առնելով շրջկենտրոնների բնակչությունը) թվաքանակի հիման վրա:

Աշխատուժի առաջարկի դինամիկան ըստ հանրապետության շրջանների

	2009թ. հունվարի 1-ի դրությամբ		2010թ. հունվարի 1-ի դրությամբ		2010թ. հունվարի 1-ի դրությամբ տվյալները տոկոսով 2009թ. հունվարի 1-ի դրությամբ տվյալների նկատմամբ	
	աշխատանք փնտրող քաղաքացիների թվաքանակը, մարդ	նրանցից գործազուրկներ	աշխատանք փնտրող քաղաքացիներ	նրանցից գործազուրկներ	աշխատանք փնտրող քաղաքացիներ	նրանցից գործազուրկներ
<b>Ընդամենը</b>	<b>3690</b>	<b>3464</b>	<b>3751</b>	<b>3531</b>	<b>101,7</b>	<b>101,9</b>
ք.Ստեփանակերտ	2739	2736	3004	3001	109,7	109,7
Ասկերան	141	141	103	103	73,0	73,0
Հաղրուք	186	186	93	93	50,0	50,0
Մարտակերտ	165	89	164	88	99,4	98,9
Մարտունի	193	107	108	56	56,0	52,3
Շուշի	120	110	93	87	77,5	79,1
Քաշաթալ	146	95	186	103	127,4	108,4

2009թ. հունվարի 1-ի համեմատ 2010թ. հունվարի 1-ի դրությամբ աշխատանք փնտրող քաղաքացիների ու գործազուրկների թվաքանակի աճ է գրանցվել Քաշաթաղի շրջանում և Ստեփանակերտ քաղաքում:

Գործազուրկների կառուցվածքն ըստ շրջանների 2010թ. հունվարի 1-ի դրությամբ




2010թ. հունվարի 1-ի դրությամբ գրանցված 3531 գործազուրկներից միայն 10.6 տոկոսն է հանդիսանում նպաստառու: Նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ գործազուրկների թիվը աճել է 67-ով կամ 1.9 տոկոսով, իսկ նպաստառու գործազուրկների թիվը նվազել է 173-ով կամ 31.5 տոկոսով:

Գործազուրկների և նպաստառու գործազուրկների թվաքանակների դինամիկան ըստ շրջանների

	Գործազուրկների թվաքանակը		այդ թվում՝ նպաստառու	
	2009թ. հունվարի 1-ի դրությամբ	2010թ. հունվարի 1-ի դրությամբ	2009թ. հունվարի 1-ի դրությամբ	2010թ. հունվարի 1-ի դրությամբ
<b>Ընդամենը</b>	<b>3464</b>	<b>3531</b>	<b>549</b>	<b>376</b>
ք.Ստեփանակերտ	2736	3001	326	257
Ասկերան	141	103	36	23
Հաղրուք	186	93	31	20
Մարտակերտ	89	88	41	20
Մարտունի	107	56	28	9
Շուշի	110	87	43	20
Քաշաթալ	95	103	44	27

Գործազուրկների և նպաստառու գործազուրկների դինամիկան 2008-2009թթ. ըստ ամիսների (մարդ)



2010թ. հունվարի 1-ի դրությամբ կանայք կազմում են պաշտոնապես գրանցված գործազուրկ քաղաքացիների 92.9 տոկոսը: Գործազուրկ կանանց մեծամասնությունն ունի հիմնական ընդհանուր կրթություն՝ 48.5 տոկոս և պատկանում է 22-30 տարիքային խմբին՝ 44.9 տոկոս:

Գործազուրկների տարիքային և կրթական կազմի վերաբերյալ տվյալների դինամիկան ըստ սեռի

	2009թ. հունվարի 1-ի դրությամբ			2010թ. հունվարի 1-ի դրությամբ		
	ընդամենը	կանայք	տղամարդիկ	ընդամենը	կանայք	տղամարդիկ
<b>Ընդամենը գործազուրկներ</b>	<b>3464</b>	<b>3197</b>	<b>267</b>	<b>3531</b>	<b>3281</b>	<b>250</b>
այդ թվում՝ ըստ տարիքային խմբերի						
մինչև 18	-	-	-	-	-	-
18-22	193	171	22	171	153	18
22-30	1658	1486	172	1649	1474	175
30-50	1311	1259	52	1375	1342	33
50 և բարձր	302	281	21	336	312	24
ըստ կրթության						
բարձրագույն	578	560	18	627	610	17
միջնակարգ մասնագիտական	1078	986	92	1097	1009	88
հիմնական ընդհանուր	1725	1595	130	1714	1592	122
միջնակարգ (լրիվ) ընդհանուր	83	56	27	93	70	23

Բերված տվյալների համաձայն՝ 2010թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում գրանցված գործազուրկների 46.7 տոկոսը պատկանում է 22-30 տարիքային խմբին, 38.9 տոկոսը՝ 30-50, 9.5 տոկոսը՝ 50-ից բարձր, 4.9 տոկոսը՝ 18-22 տարիքային խմբին:

Գործազուրկների կառուցվածքի ուսումնասիրությունն ըստ կրթության ցույց է տալիս, որ ընդհանուր գործազուրկների մեջ 2010թ. հունվարի 1-ի դրությամբ ամենաբարձր տեսակարար կշիռներն ունեն հիմնական ընդհանուր և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող գործազուրկները համապատասխանաբար՝ 48.5 և 31.1 տոկոս:

2010թ. հունվարի 1-ի դրությամբ գրանցված գործազուրկների 17.8 տոկոսն ունի բարձրագույն կրթություն: 2010թ. հունվարի 1-ի դրությամբ ԼՂՀ սոցիալական ապահովության նախարարության տարածքային (քաղաքային) գործակալություններում գրանցված գործազուրկ քաղաքացիների կրթության և մասնագիտությունների մասին տվյալները ներկայացվում են ստորև.

Գործազուրկներն ըստ մասնագիտության

Մասնագիտությունների անվանումը	Քանակը, ընդամենը	այդ թվում՝		
		բարձրագույն	միջին մասնագիտական	հիմնական (միջնակարգ) ընդհանուր
<b>Ընդամենը գործազուրկներ</b>	<b>3531</b>	<b>627</b>	<b>1097</b>	<b>1807</b>
այդ թվում՝				
1. Մանկավարժ	230	172	58	-
2. Բժիշկ	10	10	-	-
3. Բուժքույր, բուժակ	197	3	194	-
4. Տնտեսագետ	92	35	57	-
5. Հաշվապահ	240	15	205	20
6. Ինժեներ-մեխանիկ	30	17	13	-
7. Վարորդ	15	-	1	14
8. Խառատ-ֆրեզերագործ	4	-	2	2
9. Փականագործ	2	-	1	1
10. Հյուսն, ատաղձագործ, ներկորդ	3	-	-	3
11. Այլ մասնագիտություններ	1298	373	562	363


ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Մասնագիտությունների անվանումը	Քանակը, ընդամենը	այդ թվում՝		
		բարձրագույն	միջին մասնագիտական	հիմնական (միջնակարգ) ընդհանուր
12. Մասնագիտություն չունեցողներ	1410	2	4	1404

Գործազուրկների 39.9 տոկոսը չունի որևէ մասնագիտություն, մասնագիտություն ունեցողների մեջ գերակշռում են հաշվապահները՝ 11.3 տոկոս և մանկավարժները՝ 10.8 տոկոս:


2009թ. ԼՂՀ սոցիալական ապահովության նախարարության աշխատանքի և զբաղվածության բաժին դիմած քաղաքացիներից աշխատանքի են տեղավորվել 165-ը (որից գործազուրկ ճանաչված 142 մարդ)՝ 2008թ. 180-ի փոխարեն:

Աշխատանք փնտրողների աշխատանքի տեղավորումը ըստ տնտեսության ճյուղերի 2009թ.



Ստացված տվյալների համաձայն 2009թ. աշխատանք փնտրողների 13.9 տոկոսն աշխատանքի են տեղավորվել առևտրի և հասարակական սննդի, 11.5 տոկոսը՝ կրթության, 37.0 տոկոսը՝ այլ ճյուղերում:

Աշխատանք փնտրողների աշխատանքի տեղավորումը ըստ շրջանների 2009թ. (տոկոսներով)




Տարեսկզբից աշխատանքի տեղավորված գործազուրկների բաշխումն ըստ գործազրկության տևողության

	Ընդամենը (մարդ)	այդ թվում՝ կանայք
Մինչև 3 ամիս	9	8


3-ից մինչև 6 ամիս	16	9
6-ից մինչև 12 ամիս	57	47
Մեկ տարուց ավել	60	49

Տարեսկզբից աշխատանքի տեղավորված գործազուրկների բաշխումն ըստ գործազրկության տևողության (տոկոսներով)



Ըստ շրջանների աշխատանք փնտրող և աշխատանքի տեղավորված քաղաքացիների թվաքանակների հարաբերակցությունը տատանվում է 1.2-ից (ք.Ստեփանակերտ, Մարտակերտի շրջանի) 44.1 տոկոսի (Շուշիի շրջանի) սահմաններում: Այդ հարաբերակցության տատանումներն ըստ շրջանների գրաֆիկորեն պատկերված է ստորև.

Աշխատանքի տեղավորված քաղաքացիների թվաքանակը՝ տոկոսներով՝ աշխատանք փնտրող քաղաքացիների ընդհանուր թվաքանակի նկատմամբ



Կադրային հոսքերը քաղաքացիական ծառայության համակարգում 2009թ.

2009թ. ընթացքում ԼՂՀ քաղաքացիական համակարգում հայտարարվել են 310 թափուր պաշտոնների համար մրցույթներ, որոնցից 11-ը՝ բարձրագույն, 56-ը՝ գլխավոր, 160-ը՝ առաջատար և 83-ը՝ կրտսեր պաշտոնների համար:

Նշված մրցույթներից կայացել են 231-ը, որոնցից 10-ը՝ բարձրագույն, 40-ը՝ գլխավոր, 106-ը՝ առաջատար և 75-ը՝ կրտսեր պաշտոնների համար:

Չեն կայացել 79 մրցույթներ, որոնցից 1-ը՝ բարձրագույն, 16-ը՝ գլխավոր, 54-ը՝ առաջատար և 8-ը՝ կրտսեր պաշտոնների համար:

Մրցույթներին մասնակցելու հայտ են ներկայացրել 408 քաղաքացիներ, որոնցից 12-ը՝ բարձրագույն, 42-ը՝ գլխավոր, 137-ը՝ առաջատար և 217-ը՝ կրտսեր պաշտոնների համար: Նշված անձանցից մրցույթին մասնակցել են 354 քաղաքացիներ, որոնցից 10-ը՝ բարձրագույն, 40-ը՝ գլխավոր, 121-ը՝ առաջատար և 183-ը՝ կրտսեր պաշտոնների համար:

Մրցույթների արդյունքում հաղթող են ճանաչվել 277 քաղաքացիներ, որոնցից 10-ը՝ բարձրագույն, 37-ը՝ գլխավոր, 97-ը՝ առաջատար և 133-ը՝ կրտսեր պաշտոնների համար:

2009թ. ընթացքում ԼՂՀ քաղաքացիական ծառայության համակարգում վերապատրաստման ենթակա են եղել 156 քաղաքացիական ծառայողներ, որոնցից 11-ը՝ բարձրագույն, 129-ը՝ գլխավոր, 10-ը՝ առաջատար և 6-ը՝ կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողներ: Վկայական են ստացել վերապատրաստման ենթակա բոլոր քաղաքացիական ծառայողները:

2009թ. ընթացքում ԼՂՀ քաղաքացիական ծառայության համակարգում ատեստավորվել են 183 քաղաքացիական ծառայողներ, այդ թվում 76-ը՝ փաստաթղթային, որոնցից համապատասխանաբար՝ 4-ը և 2-ը՝ բարձրագույն, 58-ը և 32-ը՝ գլխավոր, 72-ը և 23-ը՝ առաջատար և 49-ը և 19-ը՝ կրտսեր պաշտոն զբաղեցնող

քաղաքացիական ծառայողներ: 4 քաղաքացիական ծառայողներ չեն համապատասխանել իրենց զբաղեցրած պաշտոնին, այդ թվում՝ 1 գլխավոր, 2 առաջատար և 1 կրտսեր:

2009թ. հունվարի 1-ից մինչև 2009թ. դեկտեմբերի 30-ը կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցվել է 17 մարդ, որոնցից 9 հոգի գործուղվել են աշխատանքի, իսկ 8 հոգի տեղափոխվել են կադրերի երկարաժամկետ ռեզերվ՝ կարճաժամկետ ռեզերվում գրանցված լինելու միանգամյա ժամկետը լրանալու հիմքով:

Նույն ժամանակահատվածում կադրերի երկարաժամկետ ռեզերվում գրանցվել է 74 մարդ, որոնցից 19-ը գործուղվել են աշխատանքի, իսկ 47 հոգի քաղաքացիական ծառայության խորհրդի որոշմամբ դուրս են գրվել ռեզերվից՝ երկարաժամկետ ռեզերվում լինելու միանգամյա ժամկետը լրանալու հիմքով:

Քաղաքացիական պաշտոնների խմբերում ընդգրկված պաշտոնների թիվը 2008թ. համեմատ ավելացել է 94-ով՝ կազմելով 1153 պաշտոն, որից բարձրագույն պաշտոնները՝ 47, գլխավորը՝ 315, առաջատարը՝ 495, կրտսերը՝ 296:

**1.4.2. Բնակչության դրամական եկամուտները և ծախսերը, աշխատավարձ և այլ եկամուտներ**

*Բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը*

Բնակչության դրամական եկամուտները 2009թ. կազմել են 88366.8 մլն դրամ և նախորդ տարվա համեմատ աճել են 9.4 տոկոսով: Դրամական ծախսերը կազմել են 88249.3 մլն դրամ, նախորդ տարվա համեմատ ավելացել են 11.6 տոկոսով:

*Բնակչության դրամական եկամուտները և ծախսերը*

	2008թ.	2009թ.	Բացարձակ աճը (նվազումը «-» նշանով)	/մլն դրամ / 2009թ. տոկոսներով 2008թ. նկատմամբ
Բնակչության դրամական եկամուտները	80764.6	88366.8	7602.2	109.4
Բնակչության դրամական ծախսերը	79086.4	88249.3	9162.9	111.6
Եկամուտների գերազանցումը ծախսերի նկատմամբ	1678.2	117.5	-1560.7	7.0

*Բնակչության դրամական եկամուտներն ըստ աղբյուրների*

	2008թ.	2009թ.
<b>Ընդամենը եկամուտներ</b> այդ թվում՝	<b>100.0</b>	<b>100.0</b>
Աշխատանքի վարձատրություն	56.3	58.7
Սոցիալական և այլ տրանսֆերտներ	19.1	20.8
Եկամուտներ գյուղմթերքների իրացումից	14.1	12.4
Եկամուտներ ձեռնարկատիրական գործունեությունից	5.2	5.1
Այլ եկամուտներ	5.3	3.0

Բնակչության դրամական եկամուտների կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ամենաբարձր տեսակարար կշիռն ունի աշխատանքի վարձատրությունը՝ 2008թ.՝ 56.3 տոկոս, 2009թ.՝ 58.7 տոկոս:

Բնակչության դրամական եկամուտների ընդհանուր ծավալից 2009թ. ապրանքների գնման և ծառայությունների վճարման համար բնակչությունը ծախսել է 83697.5 մլն դրամ (94.7 տոկոս), պարտադիր վճարումների և կամավոր մուծումների կատարման համար՝ 4426.1 մլն դրամ (5.0 տոկոս):

*Բնակչության դրամական եկամուտների օգտագործման կառուցվածքը (տոկոսներով)*

	2008թ.	2009թ.
<b>Ընդամենը եկամուտներ</b> <i>դրանցից օգտագործվել են՝</i>	<b>100.0</b>	<b>100.0</b>
Ապրանքների գնման	77.4	78.3
Ծառայությունների վճարման համար	13.9	16.4
Պարտադիր վճարների և զանազան այլ մուծումների համար	5.1	5.0
Ավանդների և արժեթղթերի ձեռք բերման համար	2.1	2.6

ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	2008թ.	2009թ.
Վարկերի դիմաց պարտավորությունների փոփոխություն	-4.6	-3.5
Այլ ծախսեր	4.0	1.1
Կանխիկ դրամի աճ (+) կամ նվազում (-) բնակչության ձեռքին	2.1	0.1

Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտներ: Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները (եկամուտները՝ հանած պարտադիր վճարումները, հաշվի առած ապրանքների և ծառայությունների սպառողական գների ինդեքսների փոփոխությունները) 2009թ. կազմել են 80867.7 մլն դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ աճել է 5.5 տոկոսով:


Աշխատանքի վարձատրություն\*

2009թ., համաձայն վիճակագրական տեղեկություններ տրամադրողների կողմից ստացված տվյալների, տնտեսությունում զբաղվածների միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 88768 դրամ և նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 10.3 տոկոսով: Ընդ որում՝ բյուջետային ֆինանսավորում ունեցող հիմնարկներում և կազմակերպություններում զբաղվածների աշխատավարձը կազմել է 97947 դրամ և նախորդ տարվա համեմատությամբ աճել է 11.8 տոկոսով, իսկ առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում զբաղվածներինը համապատասխանաբար՝ 82216 դրամ և ավելացել է 8.9 տոկոսով: Անվանական միջին աշխատավարձի տատանումն ըստ տնտեսության ճյուղերի և փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ բնութագրվում է ստորև բերված տվյալներով.

Միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ տնտեսության ճյուղերի

	2008թ.	2009թ.	այդ բվում՝			2009թ. տոկոսներով 2008թ. նկատմամբ	/դրամ/ 2009թ. ճյուղերի միջին ամսական անվանական աշխատավարձը տոկոսներով՝ միջին հանրապետականի նկատմամբ
			բյուջետային ֆինանսավորում ունեցող հիմնարկներում և կազմակերպություններում	առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում, որից՝			
				պետական հատված	ոչ պետական հատված		
<b>Ընդամենը</b>	<b>80480</b>	<b>88768</b>	<b>97947</b>	<b>67 925</b>	<b>87 119</b>	<b>110,3</b>	<b>100,0</b>
Արդյունաբերություն	86502	91570	-	72 613	99 709	105,9	103,2
Գյուղատնտեսություն	68662	78554	42 723	78 820	79907	114,4	88,5
Անտառտնտեսություն	44808	45443	45 443	-	-	101,4	51,2
Շինարարություն	110053	115523	-	132 639	114 296	105,0	130,1
Տրանսպորտ	95050	98124	56 094	38 684	111 218	103,2	110,5
Կապ	91758	91266	-	51202	106 245	99,5	102,8
Առևտուր	55924	56695	-	44098	56757	101,4	63,9
Այլ ճյուղեր	55692	68891	57049	77969	50573	123,7	77,6
Բնակվում տնտ. և կենցաղապասարկում	55116	57332	47 531	48 381	66 723	104,0	64,6
Առողջապահություն	43350	58403	47 799	63 737	34 858	134,7	65,8
Սոցիալական ապահովություն և ապահովագրություն	62487	54826	54 951	-	50 889	87,7	61,8
Ֆիզկուլտուրա և սպորտ	37825	45623	45 771	-	36 722	120,6	51,4
Կրթություն	57906	70366	71 203	69 672	55 524	121,5	79,3
Մշակույթ և արվեստ	43010	49489	40 404	62 169	55 672	115,1	55,8
Գիտություն և գիտական սպասարկում	50309	44993	48 248	41 136	-	89,4	50,7
Ֆինանսներ և վարկ	156595	170572	-	-	170 572	108,9	192,2
Կառավարում և պաշտպանություն	126552	135347	135 934	64 381	-	106,9	152,5
Հասարակական և այլ կազմակերպություններ	50600	66783	-	-	66 783	132,0	75,2

\* «Աշխատանքի վարձատրություն» բաժնի տվյալները բերված են համաձայն տնտեսավարող սուբյեկտներից ստացված հաշվետվությունների, որտեղ, սակայն, որոշ ճյուղերում նշված աշխատավարձի չափերը չեն համապատասխանում իրականությանը: Նշված բերությունները հաշվի են առնված բնակչության դրամական եկամուտների հաշվարկներում, որտեղ հաշվետվային տվյալներից գերծ կիրառվել է նաև լրահաշվարկ:



Ճյուղային կտրվածքով միջին ամսական անվանական աշխատավարձը զգալիորեն բարձր է եղել, հատկապես, վարկավորման և կառավարման համակարգերում, որոնք միջին հանրապետական աշխատավարձի համեմատ կազմել են համապատասխանաբար՝ 192.2 և 152.5 տոկոս:

2009թ. միջին ամսական անվանական աշխատավարձը հանրապետական միջինի նկատմամբ ցածր է հատկապես գիտության և գիտական սպասարկման (50,7տոկոս), անտառտնտեսության (51.2տոկոս) և ֆիզկուլտուրա և սպորտ (51,4 տոկոս) ոլորտներում:


*Միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ շրջանների և տնտեսության ոլորտների, 2009թ.*

/դրամ/

Ընդամենը ԼՂՀ	Միջին ամսական անվանական աշխատավարձը, դրամ						
	Ընդամենը ԼՂՀ	Գյուղատնտեսություն և անտառային տնտեսություն	Արդյունաբերություն	Շինարարություն	Տրանսպորտ և կապ	Պետական կառավարում	Այլ
<b>Ընդամենը ԼՂՀ</b>	<b>88768</b>	<b>76951</b>	<b>91570</b>	<b>115523</b>	<b>93949</b>	<b>135347</b>	<b>64581</b>
ք.Ստեփանակերտ	103164	81623	75387	128841	111177	153294	68950
Ասկերան	68967	71762	58539	82755	69126	79086	63463
Հաղրուք	61 834	69 320	64369	65625	70553	67825	56124
Մարտակերտ	93 710	97 051	163975	100503	69260	62364	59132
Մարտունի	60 960	71 300	53055	63689	66474	72657	56961
Շահումյան	66 888	59 998	56766	68515	-	68136	67750
Շուշի	62 580	71 336	61810	71831	77509	83616	52542
Քաշաթաղ	69 153	72 643	53729	68807	65811	64263	71625

**Ընդամենի նկատմամբ, %**

Ընդամենը ԼՂՀ	100.0	86,7	103,2	130,1	105,8	152,5	72,8
ք.Ստեփանակերտ	100.0	79,1	73,1	124,9	107,8	148,6	66,8
Ասկերան	100.0	104,1	84,9	120,0	100,2	114,7	92,0
Հաղրուք	100.0	112,1	104,1	106,1	114,1	109,7	90,8
Մարտակերտ	100.0	103,6	175,0	107,2	73,9	66,6	63,1
Մարտունի	100.0	117,0	87,0	104,5	109,0	119,2	93,4
Շահումյան	100.0	89,7	84,9	102,4	0,0	101,9	101,3
Շուշի	100.0	114,0	98,8	114,8	123,9	133,6	84,0
Քաշաթաղ	100.0	105,0	77,7	99,5	95,2	92,9	103,6



*Միջին ամսական անվանական և իրական աշխատավարձերը, 2008-2009թթ.*



	<b>2008թ.</b>	<b>2009թ.</b>
Միջին ամսական անվանական աշխատավարձ, դրամ	<b>80480</b>	<b>88768</b>
Իրական աշխատավարձը սպառողական գների ինդեքսով, դրամ	72767	85518

*Սահմանված նվազագույն աշխատավարձի, միջին ամսական անվանական աշխատավարձի և նվազագույն սպառողական բյուջեի հարաբերակցությունը 2009թ.*

	Նվազագույն աշխատավարձի հարաբերակցությունը, %		Միջին ամսական անվանական աշխատավարձի հարաբերակցությունը նվազագույն սպառողական բյուջեի նկատմամբ, %
	միջին ամսական անվանական աշխատավարձի նկատմամբ	նվազագույն սպառողական բյուջեի նկատմամբ*	
2009թ.	33,8	86,8	256,8

*Աշխատավարձի սահմանված նվազագույն չափը, միջին ամսական և իրական աշխատավարձերը*

	Աշխատավարձի օրենքով սահմանված նվազագույն չափը		Միջին ամսական անվանական աշխատավարձը		Իրական աշխատավարձը	
	դրամ	նախորդ տարվա նկատմամբ, %	դրամ	նախորդ տարվա նկատմամբ, %	դրամ	նախորդ տարվա նկատմամբ, %
2007թ.	20000	133.3	68610	121.0	65718	115.9
2008թ.	25000	125.0	80480	117.3	72767	110.7
2009թ.	30000	120,0	88768	110,3	85518	117,5

*Սահմանված նվազագույն աշխատավարձի, միջին ամսական անվանական աշխատավարձի և նվազագույն սպառողական բյուջեի հարաբերակցությունը,*

	Նվազագույն աշխատավարձի հարաբերակցությունը, %		Միջին ամսական անվանական աշխատավարձի հարաբերակցությունը նվազագույն սպառողական բյուջեի նկատմամբ, %
	միջին ամսական անվանական աշխատավարձի նկատմամբ	նվազագույն սպառողական բյուջեի նկատմամբ	
<b>2007թ.</b>			
I եռամսյակ	30.9	60.9	196,9
II եռամսյակ	30.1	58.3	193,4
III եռամսյակ	30.5	64.2	210,8
IV եռամսյակ	26.0	64.3	247,3
<b>2008թ.</b>			
I եռամսյակ	33.7	74.2	220.7
II եռամսյակ	30.2	72.2	238.9
III եռամսյակ	31.6	74.8	236.6
IV եռամսյակ	29.4	74.2	252.0
<b>2009թ.</b>			
I եռամսյակ	35,4	88,9	251,1
II եռամսյակ	33,3	81,6	244,8
III եռամսյակ	33,9	89,0	262,3
IV եռամսյակ	32,8	88,9	270,8

\* Հաշվարկված ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմով, կառուցվածքով և էներգետիկայով՝ համապատասխան եռամսյակի միջին ընթացիկ գներով: